

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ»
հիմնադրամում թափուր պաշտոնի վերաբերյալ**

ՊԱՇՏՈՆԸ

Իրավախորհրդատու

ԴՐՈՒՅՔԸ՝ Լրիվ դրույք

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐԸ՝ Երևան, Հայաստան, Ալեք Մանուկյան 11

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ՝ Վարչական մաս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

ՖԿՍՊԻ-ն փնտրում է իրավախորհրդատուի, ինստիտուտի իրավական բնույթի գործերի իրականացման նպատակով, որը ներառում է ՀՀ օրենսդրության համապատասխան ինչպես ներքին իրավական ակտերի մշակում, իրավական խորհրդատվություն, այնպես էլ ինստիտուտի շահերի պաշտպանություն դատարաններում, պետական և մասնավոր մարմիններում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

1. մշակել ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները,
2. մշակել ինստիտուտի աշխատանքային, ուսումնական, գիտահետազոտական, միջազգային համագործակցության աշխատանքները կանոնակարգող ընթացակարգեր, կանոնակարգեր, կարգեր, ինստիտուտի անունից կնքվող պայմանագրերի և իրավական բնույթի այլ փաստաթղթերի նախագծեր,
3. տալ իրավաբանական եզրակացություն իրեն ներկայացված իրավական ակտերի, ինստիտուտի անունից կնքվող պայմանագրերի և այլ իրավական բնույթի փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ,
4. ներկայացնել ինստիտուտի շահերը դատարաններում, պետական և մասնավոր այլ մարմիններում, իրականացնել ինստիտուտի ռեկտորի հրամաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՋՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝

1. Բարձրագույն իրավաբանական կրթություն, մագիստրոսի աստիճանը ցանկալի է
2. Հայերենի և անգլերենի գերազանց իմացությունը պարտադիր է, այլ օտար լեզուների իմացությունը կդիտվի առավելություն:
3. Առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ կրթության ոլորտում
4. «Կրթության մասին», «Բարձրագույն և հետ բուհական մասնագիտական կրթության մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքների Կրթության որակի ապահովման ՀՀ օրենսդրության, ՀՀ քաղաքացիական և դատավարության օրենսդրության, ՀՀ աշխատանքային օրենսգրքերի և իր լիազորությունների հետկապված իրավական այլ ակտերի պարտադիր իմացություն:
5. Տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
6. Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու հմտություն:
7. Էմոցիոնալ հասունություն, թիմում աշխատելու և լարված իրավիճակներում պրոֆեսիոնալ պահվածք դրսևորելու ունակություն:
8. Հաղորդակցման հմտություն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ՝

Հետաքրքրվող անձինք իրենց ինքնակենսագրականները (CV) կարող են ուղարկել ՀՖԿՊԻ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի kadrer.asipcs@mail.ru էլ-փոստին՝ վերնագիր դաշտում նշելով հաստիքի անվանումը, որի համար դիմում են: Փաստաթղթերն ընդունվում են բացառապես էլեկտրոնային եղանակով:

Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած թեկնածուները:

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻԶԲ՝

10.09.2019թ.

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝

17.09.2019թ.